ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 25-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Փետրվարի 27-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող տիկին Էմմա Բարսամյանը կարդում է հետաքրքիր դասախոսություն՝ «Տիեզերքի կառուցվածքը ժամանակակից գիտական լույսի տակ» թեմայով:

*
* *

Մարտի 4-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Մայր տաճարում, փակ սեղանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով Մեծ պահքի և ապաշխարության խորհրդի կարևորությունը հավատացյալի հոգևոր ու բարոյական կատարելության ճանապարհի վրա:

*
* *

Մարտի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում առավոտյան պաշտամունքին կից սկսվում է «Զկարգ ապաշխարութեան» և Արևագալի հանդիսավոր ժամերգությունը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում ս. Էջմիածնի միաբան տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

*
* *

Մարտի 11-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Արտաքսման կիրակէ).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալեոզյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը՝ «Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր» (Շարական) բնաբանով:

*
* *

Մարտի 18-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Անառակի կիրակէ).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը՝ «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո» (Ղուկ. ԺԵ 18) բնաբանով:

*
* *

Մարտի 24-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալեոզյանը:

*
* *

Նույն օրը հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի է գնում Խորվիրապ, ուր ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանը և քարոզում ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական և քարոզչական գործունեության մասին Հայոց աշխարհում 301—325 թվականներին:

Ս. պատարագին ներկա են լինում հոգևոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմը և բազմաթիվ ուխտավորներ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Մայր Աթոռ է ժամանում Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը, որը մեկնել էր Լոնդոն՝ ստանալու փիլիսոփայության դոկտորի իր վկայականը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանին այս փայլուն հաջողության առիթով և բարեմաղթում նրան նորանոր հաջողություններ իր ապագա եկեղեցաշնորհ գործունեության ճանապարհի վրա:

*
* *

Մարտի 25-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Տնտեսի կիրակէ).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը՝ «Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի» (Ղուկ. ԺԲ 20) բնաբանով: